մազերով զարդարուած է։ Մատուռներնուն եղունգները մեծ են ու սուր, ոտուընին մսի գունով։ Ընոց բնութիւնն ալ ընտանի ու սիրելի է. կերածնին պտուղ, ընդեղէն, որդ՝ նաև ձուկ է. չորս ոտքով կը քալեն։

Բայց ասոնց ձագերը շատ ագեղ են, ամենեին լերկ՝ մազ մը չունին վրանին, մազերնին մէկ ամիսէն ետև կը սկսի գալ. երկու ամիսէն ալ աւելի պէտք է որ կատարեալ մեծերուն նմանին։ Նրանց ամնու չափ կաթ կ'ուտեն, և քիչ մը մեծնալէն ետև մայրերնին զերեզնք կռնակնին կ'առնուն ու այնպէս ժուռ կուգան։

## Մոֆէ [1]։

Ընսոնք արտաքին ձևով ուրիշ կապիկներէն և Լեմուրներէն շատ կը տարբերին և աւելի գիշակեր կենդանեաց կը նմանին։ Ընոց վարի ծամելքին վրայ վեց կրծող ակռայ կայ, իսկ ուրիշ կապիկներուն չորսն աւելի է։ Նրանց ոտուընին առջևիններէն շատ երկայն են, ընդհակառակն ուրիշ կապիկներուն առջևի ոտուներն աւելի երկայն են քան թէ ետևինները։ Ընոնք ալ անտառներու մէջ կը բնակին և իրենց սովորական կերակուրը պտուղ է. բայց թռչուններ ու պզտի չորքոտանիներ ալ կ'որսան ու կ'ուտեն։

Ընոնք հինգ ցեղ կը բաժնուին, և են Բուն Մոֆէ, Նրնոդրէ, Լրբէս, Կալաէոյ և Դարոսէէ։

Բուն Մոֆէ [2]։ — Ընոնք միայն Մատակասքար կղզին կը գտնուին, և գլուխնին որածայր ըլլալուն համար աղուէսագլուխ կապէէ [3] ալ կ'ըսուին։ Ընոնց վարի հերձող ակռաները վեց հատ են և վերինները չորս. պոչերնին երկայն ու թաւ է։ Դազմուքիւն մէկտեղ կ'ապրին և կերակուրնին պտուղ է։

Նրնոդրէ [4]։ — Ընոնք ալ Մատակասքար կղզին կը գտնուին և առաջիններուն շատ կը նմանին, բայց վարի ծամելքին վրայ չորս հերձող ակռայ ունին։ Պոչերնին կարճ է, և ետևի ոտուընին գրեթէ առջևիններուն կրկինն է, որով հեռուները կը ցատքեն. բնութեամբ հեզ և հասկցող են։ Մատակասքարի հարաւային կողմի բնակիչները զասոնք կ'ընտանեցընեն և շան տեղ որսի կը գործածեն։

Լրբէս [1]։ — Ամ սովորական անուամբ յամրաքայլ կամ ծոյլ կ'ըսուի, արևելեան Հնդկաստան կը գտնուին։ Ընոնց վրայ Օրագրիս մէջ խօսած ըլլալով՝ աւելորդ կը սեպենք հոս խօսքերնիս երկրնցընելը [2]։

Կալակոյ [3] կամ Դարոսէէ [4]։ — Ընոնք գիշերային կենդանիներ են. առաջինները Աֆրիկէ կը գտնուին, երկրորդները Մոլուքեան կղզիները։ Ընոնց ետևի ոտուընները չափէ դուրս երկայն են և աչուընին ալ խոշոր։

Կալակոյ բառածները այս յատկութիւնս ունին որ իրենց ականջները ջղջիկան ականջներուն պէս խոշոր են, և երբեմն այնպէս կը բանան որ բարակ ձայն մին ալ ըլլայ կը լսեն. երբեմն ալ բոլորովին ներս կը քաշեն որ բան չերևնար, որով լսելիքին ձամքան կը գոցուի և ձայն չեն իմանար։

---

Մարդուս կեանք երկու դուռ ունի, մէկէն ներս կը մտնէ, մէկալէն դուրս կ'ելլէ։ Որչափ մէկէն հեռանաս, այնչափ մէկալէն կը մօտենաս. ու որչափ որ ելլելու դռան կը մօտիկնաս այնչափ աւելի մնածէ վրան։

1 Գղ. Maki.
2 Լա. Lemur. Գղ. Maki proprement dit.
3 Գղ. Singe à tête de renard.
4 Լա. Lichanotus. Գղ. Indri.

1 Լա. Tardigradus. Գղ. Loris.
2 Բ. Տարի. երես. 355։
3 Լա. Tarsius. Գղ. Galago.
4 Լա. Otolicnus. Գղ. Tarsier.